Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ1միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ «Մոտիվացիան՝ որպես ուսուցման կարևորագույն մաս»

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցչի օգնական՝ Սոնա Աբրահամյան

Ն. Գետաշեն 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3
1.Ուսուցչի օգնականը և նրա աշխատանքը----------4
2.Մոտիվացիայի բարձրացումը՝ որպես խնդիր----------7
3.Մոտիվացիայի բարձրացման վրա ազդող գործոններ----------7
4.Արտաքին մոտիվացիա և ներքին մոտիվացիա----------8
5.Մոտիվացիայի բացակայությունը դպրոցում----------11
6. Ի՞նչ պետք է անի ուսուցչի օգնականը սովորողների
մոտիվացիան բարձրացնելու համար----------12
7.Եզրակացություն----------16
8.Օգտագործված գրականության ցանկ----------17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քանի որ ուղեղը ի վիճակի չէ ուշադրություն դարձնել ամեն ինչի,ոչ հետաքրքիր,

ձանձրալի կամ է մոցիոնալ մռայլ դասերը պարզապես չի հիշում:

Ժամանակակից դպրոցում ուսուցման արդյունավետությունը կախված է նախ և առաջ մոտիվացիայից:Իսկ ի՞նչ է մոտիվացիան: Մոտիվացիան ներքին և արտաքին դրդիչ գործոններն են,որոնք, շարժառիթ հանդիսանալով,դրդում են մարդկանց իրականացնել գործողություններ, որպեսզի հասնեն նպատակին: Մոտիվացիան շատ կարևոր է արդյունավետ աշխատանքի համար: Այն ներքին ցանկություն է, որը մղում է դեպի առաջ՝ դեպի նախանշած նպատակը: Գրող Լես Բրաունը մոտիվացիայի մասին ասել է.'Ինչ-որ բան ցանկանալը բավական չէ, դու պետք է ձգտես դրան:Քո մոտիվացիան պետք է այնքան հզոր լինի, որ կարողանաս հաղթահարել այն խոչընդոտները,որոնք անխուսափելիորեն կհայտնվեն ճանապարհիդ':

Երբ մարդը թույլ է, հոգնած,չունի գործելու, ապրելու, արարելու ցանկություն, դա կարող է լինել մոտիվացիայի բացակայության հետևանք: Այդ երևույթը շատ տեսանելի է դպրոցում՝ երեխաների մոտ:Երեխաները շատ հաճախ են հոգնում, ձանձրանում, որովհետև չեն հասկանում սովորելու հիմնական նպատակը, նրանք չեն կարող պատկերացնել սովորելու լավ կողմերը կամ առանց գիտելիքների դպրոցը ավարտելու բացասական հետևանքները: Հետևաբար մշտական քարոզները այդ մասին նրանց ոչինչ չեն տալիս, այլ միայն հոգնեցնում են, հաճախ էլ հունից հանում: Դրա փոխարեն ուսուցիչը պետք է մտածի աշակերտներին մոտիվացնելու մասին, նրանց մշտապես հետաքրքիր առօրյայով ապահովի,որպեսզի ուսումնառության պրոցեսը նրանց համար ձանձրալի չթվա: Նրանք պետք է մշտապես ունենան փոքրիկ մոտիվացիաներ՝ գնահատականը, խրախուսանքի տարբեր տեսակները, տարբեր մեթոդներ ու միջոցներ, որոնք մշտապես հետաքրքիր կդարձնեն ուսումնառության պրոցեսը:

Գտնելով, որ մոտիվացիան ուսուցման գործընթացում շատ արժեքավոր ու կարևոր բաղադրիչ է, որոշեցի ուսումնասիրել հենց այս թեման ու վեր հանել թեմայի հետ կապված նրբությունները:

Լինելով ուսուցչի օգնական՝ ես կփորձեմ հիշյալ թեման ուսումնասիրել հենց այդ տեսանկյունից, այսինքն՝ կփորձեմ բացահայտել, թե կոնկրետ ուսուցչի օգնականը ինչ պետք է անի սովորողների մոտ մոտիվացիան բարձրացնելու նպատակով:Այդ է պատճառը, որ աշխատանքի սկզբում ես մի փոքր կխոսեմ ուսուցչի օգնականի աշխատանքի, նրա պարտականությունների ու անելիքների մասին, նոր միայն կանդրադառնամ այն հարցին, թե ուսուցչի օգնականը ինչ դեր կարող է ունենալ աշակերտների մոտիվացիան բարձրացնելու հարցում:

ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Օգնականը դպրոցում պետք է լինի ուշադիր, տեսնի նույնիսկ այն, ինչը ուսուցիչը կարող է չտեսնել:

Ուսուցչի օգնականը կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատողն է: Լավագույն ուսուցչի օգնականը պետք է ունենա անձնային և մասնագիտական այնպիսի որակներ, ինչպիսիք են հոգատարությունը, արդարամտությունը, հանդուրժողականությունը, նախաձեռնողականությունը: Այսպիսով՝ որոնք են ուսուցչի օգնականի պարտականությունները դպրոցում:

• Աջակցում է ուսուցչին դասի պլանավորման, ընդհանուր և անհատական նպատակների սահմանման, **դասապրոցեսի ընթացքում կիրառվող ուսումնամեթոդական խթանիչ նյութերի նախապատրաստման**, ինչպես նաև ԱՈԻՊ-ի մշակման և իրականացման գործընթացներում:

• Աջակցում է ուսուցչին **արտադասարանական միջոցառումների կազմակերպման և իրականացման**, խմբի գործունեության վերահսկման և վարքի կառավարման աշխատանքներում:

• Ըստ անհրաժեշտության, դասապրոցեսի ընթացքում և դրանից հետո լրացուցիչ աջակցություն է տրամադրում բոլոր, այդ թվում ԿԱՊԿ ունեցող սովորողներին՝ **խթանելով կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման**, սովորողների անհատական և սոցիալական ձեռքբերումների զարգացման գործընթացը:

• Ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների հետ համատեղ իրականացնում է դասի արդյունավետության գնահատում, ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրների բացահայտում:

• Համագործակցում է սովորողների ծնողների և խնամակալների հետ:

Այսպիսով, թվարկելով ուսուցչի օգնականի պարտականությունները, հասկանալի դարձրինք, թե ինչպիսի մեծ ծավալի աշխատանք պետք է կատարեն դպրոցում ուսուցչի օգնականները: Ուսուցչի օգնականի գործունեության այն կետերը, որոնք առնչվում են աշակերտների մոտիվացիայի բարձրացման խնդիրներին, նշել եմ մուգ գույնով:Ելնելով վերը նշվածից՝ ձևակերպենք գործունեության այն ձևերը, որոնց օգնությամբ կարելի է մոտիվացնել սովորողներին:

1. **Դասապրոցեսի ընթացքում կիրառվող ուսումնամեթոդական խթանիչ նյութերի նախապատրաստում:**
2. **Արտադասարանական միջոցառումների կազմակերպում և իրականացում:**
3. **Սովորողներին լրացուցիչ աջակցության տրամադրում տարբեր գործընթացներում:**
4. **Սովորողների ծնողների և խնամակալների հետ համագործակցում:**

Օգնականը դպրոցում պետք է լինի բոլորի կողքին, նա պետք է աջակցի և՛ ուսուցիչներին, և՛ սովորողներին, հասկանա նրանց խնդիրները, առողջական վիճակից տեղյակ լինի, բացահայտի վարքագծի պատճառները: Նա պետք է աջակցի սովորողների ուսումնառությանը, վարքագծի կառավարմանը, նաև՝ ԿԱՊԿ ունեցող սովորողներին: Այս ամենի մեջ կարևոր է այն, որ նա աստիճանաբար իր օգնությունը պետք է հասցնի նվազագույնի՝ սովորեցնելով աշակերտին ստեղծված

իրավիճակներում գործել ինքնուրույն: Այստեղ առաջնահերթ է դառնում նաև աշակերտներին մոտիվացնելու պահանջը:

Քանի որ այս աշխատանքը նպատակ ունի պարզել, թե ինչպես կարելի է մոտիվացնել աշակերտներին, ապա մենք կանդրադառնանք միայն օգնականի աշխատանքի այն հատվածներին, երբ խոսքը մոտիվացիայի մասին է: Օգնականի պարտականությունների մեջ է մտնում նաև ուսուցչի հետ միասին օրվա դասապլանի կազմումը: Դասապլանի հետ կապված օգնականը ունի իր սեփական անելիքները: Դրանք ներկայացված են ներքևում:

Դասապլանը համատեղ կազմելուց առաջ օգնականը պետք է կատարի հետևյալը:

1.Պարզի, թե ինչ կառուցվածք է ունենալու դասը:
2.Ուսուցչի հետ քննարկի դասավանդման առավել արդյունավետ մեթոդների, հնարների, միջոցների և գիտելիքների ստուգման ձևերի ընտրությունը:
3.Տեղեկացնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունների և կատարողականության առկա մակարդակի մասին:
4. Ծանոթանա ուսումնական նյութին և այն անհատական աշխատանքներին, որոնք պատրաստվում են իրականացնել:
5.Պլանավորի այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է տրամադրել առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին:
6.Ծանոթանա դասի խնդիրներին և նպատակներին՝ կրթական, դաստիարակչական:
Այս ամենից հետո նա արդեն կարող է մտածել՝ ինչպես մոտիվացնել աշակերտներին: Խոսքը կարող է վերաբերել ինչպես ամբողջ դասարանին, այնպես էլ որոշակի աշակերտների՝ անհատական կերպով: Մոտիվացիայի մասին, բնականաբար, հատուկ չի նշվում դասապլանում, բայց անհրաժեշտ է ուսուցչի հետ միասին մտածել այդ ուղղությամբ, ընտրել որոշակի մեթոդներ, եղանակներ, որոնք աշակերտներին կթվան հետաքրքիր, կմղեն նոր ձեռքբերումների:

ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԽՆԴԻՐ

Առանց ցանկության սովորող աշակերտը նման է թևեր չունեցող թռչունի:

ՍԱԱԴԻ

Այս խնդիրը բոլոր երկրներում կրթության ոլորտի մեծագույն խնդիրներից մեկն է: Գնալով սովորողների մոտ պակասում է կրթության հանդեպ հետաքրքրությունը, քանի որ կյանքը հեշտացել է, մարդիկ՝ ծուլացել, կան այլ հետաքրքրություններ, ի վերջո դպրոցը միակ տեղը չէ, որտեղից հնարավոր է գիտելիքներ ստանալ, համացանցում միշտ հասանելի է ցանկացած տիպի ինֆորմացիա: Սա իր հերթին մարտահրավեր է դպրոցի համար:Դպրոցները պետք է ձգտեն դառնալ առավել հետաքրքիր, որպեսզի սովորողները դպրոց հաճախելու և սովորելու համար դրական դրդապատճառներ՝ մոտիվացիա ունենան: Երբ աշակերտը մոտիվացված է, նա ոչ միայն կանի նվազագույնը, այլ միջոց կփնտրի ընդլայնելու իր գործողությունների շրջանակը՝ ավելի լավ արդյունքների հասնելու համար:

ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Սովորաբար մոտիվացնելու երկու տիպի գործոններ կան՝ դրական և բացասական: Ավելի պարզ ասած՝ խրախուսանքի և պատժի միջոցները: Նախկինում պատժի միջոցները ավելի ընդունված էին, սակայն այժմ մեծամասնությունը հակված է կարծելու, որ մոտիվացիայի բարձրացման նպատակով պատիժները ցանկալի արդյունք կարող են ապահովել միայն կարճ ժամանակով, այնուհետև լրիվ հակառակ արդյունքն են տալիս: Մենք կկենտրոնանանք դրական գործոնի՝ խրախուսանքի վրա: Խրախուսանքի ձևերը տարբեր են ու բազմազան՝ սկսած հասարակ ‘ապրեսից’ մինչև դրամական պարգևները: Այդ մասին դեռ կխոսենք: Ունենք մոտիվացիայի վրա ազդող ևս մեկ գործոն՝ գիտելիքի կիրառելիությունը: Սովորողներից շատերը մտածում են, որ իրենց ստացած ուսումը պետք է կենցաղում, կիրառության մեջ իրենց

պիտանի լինի: Իսկ երբ ամեն անգամ դասապրոցեսում ցանկանում են փորձել ստացած գիտելիքների կիրառելիությունը, պարզվում է, որ շատ բան սովորում են անիմաստ, որովհետև չեն գտնում դրանց կիրառելիության ոլորտները: Այսպիսի խնդրից հնարավորինս խուսափելու նպատակով անհրաժեշտ է հաճախակի սովորողների հետ զրույցներ ունենալ այդ թեմայով ու բացատրել, որ ոչ բոլոր գիտելիքներն են, որ կարելի է անմիջապես կիրառել, բայց, օրինակ, մաթեմատիկայի խնդիրներ լուծելու պրոցեսում զարգանում է մարդու մաթեմատիկական մտածողությունը, տրամաբանելու կարողությունը: Իհարկե, շատ դժվար կլինի նրանց դրանում համոզելը: Մյուս կողմից այսօրվա հրամայականն է՝ տալ իսկապես այնպիսի գիտելիքներ ու հմտություններ, որոնք իրականում կիրառելի կլինեն կյանքում:

ԱՐՏԱՔԻՆ ՄՈՏԻՎԱՑԻԱ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՄՈՏԻՎԱՑԻԱ

‘Սովորական ուսուցիչը պատմում է, լավ ուսուցիչը բացատրում է, բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս, իսկ հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է’:

Շատ հետաքրքիր կլինի իմանալ, որ մանկավարժության մեջ առանձնացվել է մոտիվացիայի երկու տեսակ՝ արտաքին և ներքին:Արտաքին մոտիվացիայի դեպքում երեխաները սպասում են ինչ-որ արտաքին գնահատական,ինչ-որ պարգև: Օրինակ կարելի է խմբային աշխատանք կազմակերպել,երբ խմբերը մրցում են միմյանց դեմ: Այս դեպքում շատ հաճախ սովորողները նույնիսկ մոռանում են, թե ինչ են ուսումնասիրում,նյութը հե՞շտ է,թե՞ դժվար:Նրանց առաջ է մղում այն միտքը, որ իրենք կլինեն հաղթողը և կստանան բարձր միավոր, կամ փոխանցիկ դրոշներ, կամ, ավելի փոքր տարիքում, ասենք,իրենց ձեռքին սմայլիկ կկպցնեն՝ որպես հաղթողի նշան:

Ներքին մոտիվացիան մի փոքր այլ է:

Ներքին մոտիվացիան անձի ներքին մղումն է: Եթե արտաքին մոտիվացիան պայմանավորված է հատկապես ուսուցչի կամ ծնողի դերով,ովքեր երեխային

մոտիվացնում են տարբեր խրախուսանքների ու պատիժների միջոցով,ապա ներքին մոտիվացիան անձի ներսում է: Անձն ինքը գիտակցաբար ցանկանում է տիրապետել այս կամ այն նյութին,դրա մասին իմանալ որոշակի ինֆորմացիա,որոնում է ուղիներ՝ ուզածին հասնելու համար,և գլխավորապես նա անում է այդ ամենը, որովհետև հասկանում է դրա անհրաժեշտությունն ու կարևորությունը իր կյանքում: Կամ դա պարզապես հաճելի է իրեն:

Եթե աշակերտը, օրինակ, մտադրվել է բժիշկ դառնալ, նա կարող է կրել ինչպես արտաքին,այնպես էլ ներքին մոտիվացիոն գործոնների ազդեցությունը: Նրան կարելի է ոգևորել՝ բերելով դրական օրինակները, կարելի է մոտիվացնել նաև՝ բերելով բացասական օրինակներ, որպեսզի վերջինս խուսափի, ենթադրենք, անգրագետ բժիշկ դառնալուց և ձգտի ամեն կերպ սովորել՝ ապագայում լավ մասնագետ դառնալու և ճանաչված ու պահանջված դառնալու ակնկալիքով:

Եվ բերենք նույն աշակերտի օրինակը՝ ներքին մոտիվացիան ցույց տալու համար: Եթե, օրինակ, նույն աշակերտին ասվում է, որ բժիշկ դառնալը դժվար է, կան շատ ավելի հասարակ ու շատ ավելի բարձր վարձատրվող մասնագիտություններ, չարժե ձգտել բժիշկ դառնալ, նա կարող է և ունենալ ներքին հզոր մոտիվացիա և չհամաձայնել ու ամեն կերպ պնդել իրենը ու հասնել նպատակին: Այստեղ նրա մոտ մեծ դեր են խաղում ներքին մոտիվացիոն հզոր գործոններ, որոնք ստիպում են սիրել մասնագիտությունը, անձնական հետաքրքրություն ցուցաբերել դրա նկատմամբ,հաճույք ստանալ հիվանդ մարդկանց հետ շփվելուց, նրանց հոգսը կիսելուց ու նրանց կրկին առողջացած տեսնելուն միտված մասնագիտական հմտության ու ջանքերի գործադրումից:

Մանկավարժներն ու ծնողները կարող են իրենց դերը ունենալ ինչպես արտաքին մոտիվացիայի, այնպես էլ ներքին մոտիվացիայի կարգավորման գործում: Միայն թե տարբերությունն այն է,որ արտաքին մոտիվացիոն գործիքները, որոնցով հնարավոր է ազդել սովորողների վրա, շատ ավելի պարզունակ են, դրանք հասարակ քայլեր են, որոնք գրեթե ամեն օր իրականացվում են դպրոցում ուսուցիչների կողմից:

Շատ ավելի դժվար է սովորողների մոտ ներքին մոտիվացիոն գործոնները գործի դնելն ու կարգավորելը: Դա անելու համար ուսուցիչները նաև պետք է լավ հոգեբաններ լինեն, լավ ճանաչեն իրենց աշակերտներին, շատ լավ իմանան նրանց ուժեղ և թույլ կողմերը, որպեսզի ճիշտ ուղղորդեն նրանց՝ միաժամանակ չխոչընդոտելով նրանց ինքնուրույնությանը: Այստեղ արդեն պարզունակ խրախուսանքների ու պատիժների մեթոդները չէ, որ աշխատում են,այստեղ

պետք է ոգևորել աշակերտներին, աշխատել նրանց հետաքրքրությունների շրջանակի լայնացման ուղղությամբ, լայնացնել նրանց աշխարհայացքը, որպեսզի նրանք ձգտեն մտածել ու տեսնել մի քանի քայլ հեռուն: Լայն մտահորիզոն ու աշխարհայացք ունեցող անհատը, որը մեր դեպքում դպրոցական աշակերտն է, այլևս չի կարող բավարարվել տվյալ առարկայի դասից ստացած գնահատականով, նա սովորում է իսկապես սովորել ու հաճույք ստանալ իր սովորածից, սովորելու ընթացքից, այդ սովորածը կիրառելիս ստացած արդյունքներից ու իր թողած տպավորությունից: Ուիլյամ Ուորդը բոլոր ժամանակների համար արդիական այսպիսի միտք է հայտնում. 'Սովորական ուսուցիչը պատմում է, լավ ուսուցիչը բացատրում է, բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս, իսկ հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է':

Սա կարող է շատերին պարզապես գեղեցիկ միտք թվալ, բայց այս տողերը ես վերցնում եմ որպես ուղենշային տողեր իմ մանկավարժական գործունեության ճանապարհին: Դրանք մաքուր գործնական խորհուրդներ են, թե ինչպիսին պետք է լինի ուսուցիչը: Հանճարեղ է այն ուսուցիչը, ով միայն սկզբի համար է օգտագործում մոտիվացիան բարձրացնելու հասարակ ձևերը, բայց, սովորողների համար աննկատելի, գնալով հասնում է այն բանին, որ սովորողները ձեռք են բերում հզոր ներքին մոտիվացիա, այլ կերպ ասած՝ ոգեշնչվում են և սովորում են՝ առանց նույնիսկ գնահատականի կամ այլ մոտիվացիոն գործիքների կիրառման:

Գրեթե նույնանման միտք է զարգացնում նաև Անատոլի Գին: Նա այսպես է ասել. 'Տվե՛ք երեխային հետաքրքրասիրություն,գիտելիքը նա կգտնի ինքը':Առանց մանրամասնելու ավելացնեմ միայն, որ նկատի ունի դարձյալ ներքին մոտիվացիան:

ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Դպրոցում մոտիվացիայի բացակայությունը կարող է ունենալ տարբեր պատճառներ: Դրանց ծագումը նույնպես կարող է տարբեր լինել: Հնարավոր է,որ աշակերտները ընտանիքում կամ շրջապատում ունեն տարբեր խնդիրներ, որոնք նրան հնարավորություն չեն տալիս կենտրոնանալ ուսման վրա: Դրանք կարող են լինել ինչպես սոցիալական, այնպես էլ հոգեբանական: Որոշ երեխաներ տարբեր պատճառներով կարող են ունենալ շփման ու ընկալման դժվարություններ, նրանց ստացած մշտական ցածր գնահատականները կարող են նրանց տանել դեպի

հիասթափություն, կարող է առաջանալ նաև անվստահություն ու արգահատանք ուսուցչի ու առարկայի նկատմամբ: Այս ամենը չպետք է վրիպի ուսուցչի օգնականի աչքից: Նա ժամանակին պետք է տեսնի, հայտնաբերի ու ձգտի հասկանալ խնդիրը, փորձի կարգավորել այն: Այդ նպատակով նպատակահարմար է թույլ աշակերտներին հանձնարարել ավելի հեշտ առաջադրանք, որպեսզի նրանք ևս հնարավորություն ունենան ինքնադրսևորվել, ներկայացնել իրենց աշխատանքը ըստ պատշաճի և ուրախանալ ստացված արդյունքներով:

Մոտիվացիայի բացակայությունը կարող է հանգեցնել բավականին լուրջ խնդիրների: Եթե աշակերտը իր ամբողջ օրը անցկացնում է մի տեղ, որը նրան ընդհանրապես հետաքրքիր չէ, իրեն այդտեղ պարտադրված են բերել, չունի գոնե ընկերների շրջանակ ու ընդհանուր հետաքրքրություններ, դա կարող է բերել ցածր ինքնագնահատականի, կենտրանանալու դժվարության, ըմբոստ վերաբերմունքի դպրոցի, ուսուցիչների ու ամեն ինչի նկատմամբ, երբեմն՝ ընկճվածության և կյանքի հանդեպ անտարբերության:

Ելնելով վերոնշյալից՝ պետք ՝ սովորողների նկատմամբ լինել ուշադիր, ձգտել մշտապես մոտիվացնել նրանց՝ դա համարելով մանկավարժության հիմքը: Մոտիվացիան պետք է լինի ոչ թե առաջնային նպատակ, այլ՝ մանկավարժի ոճը, ինչը նրանից անբաժան է:

Մոտիվացիան պետք է լինի ոչ թե առաջնային նպատակ, այլ՝ մանկավարժի ոճը, ինչը նրանից անբաժան է:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ինչ-որ բան ցանկանալը բավական չէ: Պետք է ձգտել դրան:Մոտիվացիան պետք է այնքան հզոր լինի,որ հնարավոր լինի հաղթահարել այն խոչընդոտները,որոնք անխուսափելիորեն կհայտնվեն ճանապարհին:

Լես Բրուան

Ուսուցչի օգնականը դպրոցում ունի բազմատեսակ պարտականություններ: Դրանց մասին արդեն խոսել ենք: Այստեղ առանձված են հատկապես և միայն այն պարտականությունները, որոնք կապված են սովորողների մոտիվացիայի բարձրացման հետ: Մանրամասնենք:

1. **Դասապրոցեսի ընթացքում կիրառվող ուսումնամեթոդական խթանիչ նյութերի նախապատրաստում:** Ուսուցչի օգնականը նախապես արդեն ծանոթ պետք է լինի դասապլանին կամ կազմած լինի այն ուսուցչի հետ համատեղ: Դասից առաջ նա պետք է պատրաստի դասի համար անհրաժեշտ նյութերը, գրատախտակին գրի այն հասկացությունները, որոնց հետ առնչվելու են դասի ընթացքում: Սա արդեն իսկ մոտիվացիա է ստեղծում, որովհետև աշակերտներին հետաքրքրում է, թե արդյոք ինչ պետք է անեն դասի ընթացքում: Եթե դասը անցկացվելու է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, ապա ուսուցչի օգնականը պետք է նախապատրաստի դրանք, առանձնացնի կամ կազմի սահիկաշարեր, առանձնացնի որոշակի լրացուցիչ գրականություն, ինչը կարող է օգտագործվել տվյալ դասի ընթացքում:
2. **Արտադասարանական միջոցառումների կազմակերպում և իրականացում:**
   Ուսուցչի օգնականը պետք է աշակերտների կողքին լինի և աջակցի նրանց ամեն տեղ և ամեն ինչում՝ դասամիջոցներին, դպրոցի բակում, դպրոցի ճաշարանում: Նա պետք է իր մասնակցությունն ունենա արտադպրոցական միջոցառումներին, ինչպիսիք են էքսկուրսիաները, արշավները, այցելությունները թանգարաններ, պատմական վայրեր և այլն: Պետք է միշտ հիշել, որ սովորողների կարողությունների, հմտությունների զարգացմանն ու կրթական գործընթացի բարելավմանը նպաստում է սերտ համագործակցությունը դպրոցի հետ առնչվող բոլոր օղակների միջև՝ ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ, մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետներ, ծնողներ, սովորողներ: Ուսուցչի օգնականը, մասնակցելով երեխաների տարբեր միջոցառումներին, շահում է նրանց վստահությունը, սերտացնում է կապերը նրանց հետ, հասկանում է նրանց ցանկությունները, միաժամանակ հասկանում է, թե ինչպես, ինչ միջոցներով է հնարավոր բարձրացնել նրանց մոտիվացիան: Շեշտենք նաև, որ ցանկացած արտադասարանական միջոցառում առաջին

հերթին կազմակերպվում է սովորողների առօրյան հետաքրքիր դարձնելու, նրանց դրական հույզերով օժտելու, դպրոցի նկատմամբ սեր արթնացնելով՝ նրանց դպրոցի հետ կապելու, այսինքն՝ սովորողների մոտիվացիան բարձրացնելու նպատակով:

3. **Սովորողներին լրացուցիչ աջակցության տրամադրում տարբեր գործընթացներում:** Օգնականը պետք է աշխատի վարքագծի խանգարում ունեցող աշակերտների հետ և ապահովի որքան հնարավոր է՝ բարձր արդյունքներ: Նա պետք է հասկանա սխալ վարքագծի պատճառները: Սխալ պահվածքը կարող է ունենալ տարբեր պատճառներ: Պատճառներից են միջավայրի փոփոխությունը, առողջական խնդիրները, ոչ բարենպաստ ընտանեկան միջավայրը, հաճախակի վեճերը, որոնք կարող են երեխայի մոտ սխալ պատկերացումներ ձևավորել ընտանիքի մասին: Նա կարող է կրկնել նույն վարքագիծը՝ կարծելով, թե դա բնական երևույթ է: Ընտանեկան խնդիրները երեխայի վարքագծում կարող են արտացոլվել բացասական վարքի միջոցով, որը ցուցաբերում է երեխան՝ որպես ելք փնտրելու միջոց: Զանձրույթը ևս կարող է լինել բացասական վարքագիծ դրսևորելու պատճառ: Ուսուցչի օգնականը պետք է լսի բոլոր նման երեխաներին և կարողանա մշակել նրանց հետ աշխատելու հստակ ռազմավարություն՝ ցանկալի արդյունքի հասնելու նպատակով: Իսկ նրա ամբողջ աշխատանքը այդ ուղղությամբ կարելի է անվանել մոտիվացիայի բարձրացմանն ուղղված քայլեր: Այլ կերպ ասած՝ եթե երեխան ցուցաբերում է բացասական վարքագիծ, ապա դա խոսում է նրա մոտ մոտիվացիայի բացակայության մասին,հետևաբար նրա վարքագծի ուղղումն էլ կապված է հենց մոտիվացիայի բարձրացման հետ: Աղյուսակում ներկայացրել ենք ուսուցչի օգնականի կողմից իրականացվող այն քայլերը, որոնք տանում են սովորողի մոտիվացիայի բարձրացման:

Լսել , հասկանալ, ոգևորել	Շատ հաճախ երեխաները պարզապես կարիք ունեն այնպիսի մարդու, ով պատրաստ է լսել և հասկանալ իրենց: Հմուտ օգնականը նաև կկարողանա ոգևորել, մի քանի լավ խորհուրդներ տալ:
Մոդելավորել սոցիալական հմտությունները	Երեխաները կարող են հասակակիցների կամ մեծերի հետ շփումներում դժվարությունների հանդիպել, չիմանալ,

	թե ինչպիսի պահվածք կարելի է ցուցաբերել այս կամ այն դեպքերում, իսկ մանկավարժը կարող է նրան օգնել, ինչի արդյունքում նա ինքնավստահություն ձեռք կբերի և, երբ իր տեղը ունենա,իր շրջապատում կարողանա իրեն լավ զգալ, կանի հաջորդ քայլը՝ հետաքրքրությամբ կլսի և կմասնակցի դասին:
Բավարարել սովորողի ֆիզիկական և հուզական կարիքները	Մանավանդ փոքր տարիքում երեխաները կարող են ունենալ, օրինակ, ուտելու ցանկություն, կարոտել մայրիկին, սիրած խաղալիքներին, ընկերոջից նեղացած լինել և այլն: Սրանք մեզ փոքր մանրուքներ կթվան, բայց նրանց տարիքում այսպիսի խնդիրները կարող են խախտել նրանց բնականոն վարքագիծը, ստիպել տանջվել: Օգնականը կարող է խնդիրը հասկանալ, որևէ ձևով մոտիվացնել, թեկուզև հուսադրելու միջոցով, կամ արմատապես լուծել խնդիրները՝ վերադարձնելով նրան դասերի նկատմամբ հետաքրքրությունը վերագտնելու և ուշադրությունը կենտրոնացնելու հնարավորությունը:
Խրախուսել ֆիզիկական գործունեությունը և դրական վարքագիծը	Կան խրախուսելու զանազան մեթոդներ՝ սկսած գովելուց մինչև փոքրիկ մրցանակներ ու տարբեր խոստումներ:

4. **Սովորողների ծնողների և խնամակալների հետ համագործակցում:** Սովորողների ուսուցման և դաստիարակության գործընթացում մանկավարժները և ծնողներն ունեն ընդհանուր նպատակներ, և առանց նրանց համագործակցության հնարավոր չէ երեխայի կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպումը և իրականացումը: Երեխայի զարգացման

գործընթացում ծնողն այն կարևորագույն օղակն է, ում ակտիվ մասնակցությունն ու ներգրավվածությունը կրթական գործընթացին դրական անդրադարձ է ունենում սովորողի զարգացման, սոցիալականացման և առաջադիմության վրա: Այս համագործակցության ընթացքում ուսուցչի օգնականը ևս, պետք է նպաստի դպրոցական միջավայրում ծնողների ներգրավմանը՝ հնարավորություն տալով նրանց մասնակցել դպրոցի կողմից նախատեսված միջոցառումների կազմակերպմանը և իրականացմանը, ինչպես նաև երեխայի կրթության մասին որոշումների կայացմանը՝ հանդես գալով որպես լիիրավ գործընկեր (Սվաջյան և ուրիշներ, 2020):

Ուսուցչի օգնականի հանդիպումները ծնողների հետ,այսպիսով,նպատակ ունեն լուծել բավականին շատ խնդիրներ: Ի թիվս այլ խնդիրների՝ պետք է նշել նաև սովորողների մոտ մոտիվացիայի բարձրացման խնդիրները:

Բնական է, որ ծնողները շատ ավելի լավ են ճանաչում իրենց երեխաներին, տեղյակ են նրանց բնավորության գծերից, հոգեբանական առանձնահատկություններից, ճաշակից, հետաքրքրություններից, միաժամանակ լավ գիտեն, թե ինչը չի սիրում իրենց երեխան, ինչի հետ չի հաշտվում, ինչը կարող է նրան հանել հունից կամ ըմբոստության մղել: Միաժամանակ նա կարող է պատմել երեխայի նախասիրություններից: Սա արդեն թանկարժեք ինֆորմացիա է և՛ օգնականի, և՛ ուսուցչի համար, որպեսզի կարողանան պատկերացնել, թե անհատապես տվյալ աշակերտի վրա մոտիվացիայի բարձրացման ինչպիսի միջոցներ կարելի է կիրառել:

Այստեղ չենք խոսի ուսուցչի կիրառած մեթոդների մասին, որոնք թույլ են տալիս հասնել ընդհանուր լսարանի հետ կապված մեծ հաջողությունների, որովհետև դա ամենից առաջ ուսուցչի անելիքն է, բայց պետք է նշենք, որ կան բազմաթիվ խրախուսանքի ձևեր/դրանց մասին խոսվել է կից աղյուսակում/, որոնց կիրառմամբ առանձին աշակերտների դեպքում կարող ենք հասնել տեսանելի արդյունքների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ոչ վաղուց է, ինչ աշխատում եմ որպես ուսուցչի օգնական: Չեմ կարող հպարտանալ երկարամյա փորձով, բայց ամեն դեպքում հասցրել եմ տիրապետել աշխատանքիս առանձնահատկություններին: Հասկացել եմ նաև, որ մոտիվացիայի բարձրացումը երեխաների հետ աշխատանքում հաջողության կարևոր գրավականներից մեկն է: Ընտրեցի թեման, որպեսզի ավելի մեծ հնարավորություններ ունենամ մոտիվացիայի բարձրացման նրբությունները ուսումնասիրելու և հարցում:

Թեայի ուսումնասիրության ընթացքում ես անդրադարձել եմ այն հարցին, թե ինչպիսի պարտականություններ ունի ուսուցչի օգնականը դպրոցում, որքանով է կարևոր սովորողների մոտ մոտիվացիայի բարձրացումը, ինչպիսի գործոններն են ազդում մոտիվացիայի բարձրացման վրա: Անդրադարձ կատարվեց նաև այն հարցին, թե մոտիվացիայի ինչպիսի տեսակներ գոյություն ունեն: Այնուհետև անդրադարձա այն հարցին, թե ինչ բացասական հետևանքներ կարող ենք ունենալ այն դեպքում, երբ դպրոցում մոտիվացիոն մակարդակը շատ ցածր է:

Վերջապես անդրադարձ կատարվեց կարևորագույն հարցին՝ ինչ պետք է անի ուսուցչի օգնականը, որպեսզի խթանի սովորողների մոտ մոտիվացիայի մակարդակը: Աղյուսակով ներկայացվեց քայլաշար, որի օգնությամբ ուսուցչի օգնականը կարող է համակարգել մոտիվացիայի բարձրացմանն ուղղված իր գործողությունները:

Գյոթեն ասել է. 'Դուք կարող եք սովորել միայն այն, ինչ սիրում եք': Իրականում այդպես էլ կա, մենք երեխաներին էլ կարող ենք սովորեցնել միայն այն, ինչ նրանք սիրում են: Հետևաբար մենք նրանց պետք է սովորեցնենք սիրել դպրոցն ու կրթությունը, իսկ դրա համար մենք պետք է կիրառենք բազմաթիվ մոտիվացիոն հնարներ՝ արդյունքի հասնելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Աֆորիզմներ Պ. Պ. Պետրով,Բերլին –Երևան՝Հայաստան’-1989

2.Արմինե Գրիգորյան ՝Ազգային արժեքային համակարգի ձևավորում’

3.Ուսուցչի օգնականի ձեռնարկ-Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն-Երևան-2022

4.՝Դրդապատճառները դպրոցում դիտարկելու նոր միջոց’- humanutopia.com